Հավելված N 1
ՀՀ կառավարության 2021 թվականի
հոկտեմբերի 18-ի N 1709 - Լ որոշման

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԿԱՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԿՈՐՑՐԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ 4 ԱՄԻՍ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՄՍԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակն է սոցիալական աջակցություն տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի նոյեմբերի 21-ի N 1820-Լ կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 2021-Լ որոշումներով հաստատված միջոցառումների շրջանակներում աջակցություն ստացած (տվյալները վճարման ցուցակում ներառված) քաղաքացիներին՝ բացառությամբ նրանց, ում տվյալները սույն որոշման 6-րդ կետի համաձայն ստացվել են Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից (այսուհետ՝ փաստացի բնակված քաղաքացիներ):

2. Սույն միջոցառման շրջանակներում սոցիալական աջակցություն է տրամադրվում (փաստացի բնակված քաղաքացի է համարվում) նաև 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո ծնված երեխաներին, եթե դրամական աջակցություն նշանակելու դիմումը ներկայացնող՝ երեխայի օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը, խնամակալը, հոգաբարձուն հանդիսանում է փաստացի բնակված քաղաքացի:

3. Սոցիալական աջակցությունը տրամադրվում է ամենամսյա դրամական օգնության ձևով՝ ոչ ավելի, քան 4 ամսվա համար՝ սկսած 2021 թվականի սեպտեմբեր ամսվանից:

4. Սույն միջոցառման՝ տվյալ ամսվա շահառուներ են փաստացի բնակված քաղաքացիները, ովքեր այդ ամսվա 1-ի դրությամբ կգտնվեն Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում:

5. Տվյալ ամսվա դրամական օգնության ամսական չափը կազմում է այդ ամսվա 1-ի դրությամբ՝

1) երեխաների, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ 50000 դրամ.

2) այլ շահառուների համար՝ 25000 դրամ:

6. Սույն միջոցառման շահառու՝ մինչև 18 տարեկան երեխային նշանակված ամսական դրամական օգնությունը տրամադրվում է նրա օրինական ներկայացուցչին՝ ծնողին, որդեգրողին, խնամակալին, հոգաբարձուին՝ անկախ նրա օրինական ներկայացուցչի՝ սույն միջոցառման շահառու լինելու հանգամանքից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18.10.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ